

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏ,

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ

\_\_\_\_\_ ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ

«\_\_\_» \_\_\_\_\_ 2015 թ.

ԿԱՐԳ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ  
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մեթոդական խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) մշտական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որն ստեղծվում է ուսումնական և գիտական աշխատանքների մեթոդական բարելավման և կրթահամալիրի հրատարակությունների մեթոդական վերահսկողության նպատակով:

1.2. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

1.3. Խորհրդի կազմը ձևավորվում է կրթահամալիրի ուսումնագիտական գործունեության ոլորտում ներգրավված առաջատար աշխատողներից: Խորհրդի կազմը հաստատվում է կրթահամալիրի պետի հրամանով՝ մեկ տարի ժամկետով:

1.4. Խորհրդի նախագահ է նշանակվում կրթահամալիրի պետի առաջին տեղակալը, իսկ նախագահի տեղակալ՝ կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետը:

1.5. Խորհրդի աշխատանքների կազմակերպմանը օժանդակելու և փաստաթղթերը վարելու համար նշանակվում է խորհրդի քարտուղար:

## 2. ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդի իրավասության մեջ մտնում են՝

2.1. Ուսումնամեթոդական աշխատանքների բարելավման, այդ թվում՝ սովորողների պրակտիկայի ծրագրերի շարունակական կատարելագործման ուղղությամբ առաջարկների ներկայացումը,

2.2. Կրթահամալիրի հրատարակությունների մեթոդիկայի գնահատումը, կրթահամալիրի համապատասխան հրատարակությունների երաշխավորման հարցի քննարկումը:

2.3. Խորհրդի նախագահը՝

2.3.1. Ղեկավարում է խորհրդի աշխատանքները և պատասխանատվություն է կրում խորհրդի առջև դրված խնդիրների լուծման համար,

2.3.2. Առաջարկություն է ներկայացնում կրթահամալիրի պետին՝ խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ,

2.3.3. Հսկողություն է իրականացնում խորհրդի որոշումների կատարման նկատմամբ:

2.4. Խորհրդի նախագահի տեղակալը՝

2.4.1. Նախապատրաստում է խորհրդի նիստերը,

2.4.2. Փոխարինում է խորհրդի նախագահին՝ վերջինիս բացակայության ժամանակ:

2.5. Խորհրդի քարտուղարը՝

2.5.1. Խորհրդի նախագահի հետ համաձայնեցնելուց հետո խորհրդի անդամներին տեղեկացնում է խորհրդի նիստերի անցկացման օրվա, տեղի և օրակարգի նախագծի մասին,

2.5.2. Հավաքում և համակարգում է խորհրդի նիստերի անցկացման համար անհրաժեշտ նյութերը,

2.5.3. Խորհրդի նիստում ներկայացնում է նախորդ նիստերում կայացված որոշումների կատարման ընթացքը և արդյունքները,

2.5.4. Կազմում է խորհրդի նիստերի արձանագրությունները (պատրաստում է խորհրդի այլ փաստաթղթերը):

## 3. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ ուշ, քան կիսամյակը երկու անգամ: Նիստերում քննարկված հարցերը, դրանց բովանդակությունը, կայացված որոշումներն ու հանձնարարականները արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից:

3.2. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդի նախագահի ձայնը: Անհրաժեշտության դեպքում խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել փակ գաղտնի քվեարկություն:

3.3. Անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել խորհրդի՝ ընդլայնված կազմով նիստեր՝ հրավիրված անձանց մասնակցությամբ:

3.4. Քննարկվող հարցերին վերաբերող նյութերը խորհրդի քարտուղարին ներկայացվում են նիստից առնվազն 7 օր առաջ:

3.5. Խորհրդի նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության իրավունք ունեն միայն խորհրդի անդամները: Խորհրդի նիստի օրակարգը հաստատվում է խորհրդի կողմից:

3.6. Խորհրդի փաստաթղթերն են՝

3.6.1. Նիստի օրակարգի նախագիծը՝ ստորագրված խորհրդի քարտուղարի կողմից,

3.6.2. Խորհրդի անդամներին խորհրդի նիստին հրավիրելու ու օրակարգի նախագծին ծանոթացնելու և խորհրդի նիստին ներկայության գրանցման մասին արձանագրությունները՝ ստորագրված խորհրդի անդամների և քարտուղարի կողմից,

3.6.3. Խորհրդի նիստերի արձանագրությունները՝ ստորագրված խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից:

#### 4. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդի գործունեության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում կրթահամալիրի պետը: